

Ա. Աբրահամյան

1724 ԹՎԻ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը, 1921 թվի հուլիսի 6-ին Վրաստանի կոմունիստական պարտիայի Թբիլիսիի կազմակերպությունների ընդհանուր ժողովում տված ղեկուցման մեջ, անդրադառնալով Անդրկովկասի ժողովուրդների համերաշխության հարցին, նրանց մեջ անցյալում գոյություն ունեցող սերտ եղբայրությունը ցուցանշող հետևյալ բնորոշ օրինակն է վերհիշել 1905—1917 թվերի ժամանակաշրջանից. «Նա հիշում եմ 1905—1917 թվականները, երբ Անդրկովկասի ազգությունների և առհասարակ աշխատավորների մեջ նկատվում էր լիակատար եղբայրական համերաշխություն, երբ եղբայրության յապերը շաղկապում էին հայ, վրացի, ադրբեջանցի և ռուս բանվորներին մեկ սոցիալիստական ընտանիքի մեջ»¹

Անդրկովկասյան ժողովուրդների սերտ եղբայրությունը սկիզբ է առել խորը անցյալում և համագործակցության հողի վրա կոփվել ու ամրացել է երկար ու ձիգ դարերի ընթացքում: Անդրկովկասի բախտակից երեք ժողովուրդները՝ ադրբեջանցիները, հայերը և վրացիները՝ դարեր շարունակ միատեղ են պայքարել իրենց ազատության ու անկախության համար, միասին են աշխատել ու ուտեղծագործել և միասին ճաշակել պատմության և՛ դառնությունը, և՛ ուրախությունը:

Եղբայրական այդ երեք ժողովուրդների անցյալի պատմության մոլթ խորշերում եթե նկատվել են թշնամանքի առանձին փաստեր, ապա դրանք ստեղծողներն ու հրահրողները, ինչպես պարզված է մարքսիստական նորագույն ուսումնասիրություններում, իշխող, շահագործող խավերն են հանդիսացել, որոնք աշխատավոր ժողովրդի սոցիալական հզոր շարժումները կազմալուծելու նպատակով աշխատել են ժողովուրդների միջև արհեստական հակադրություններ ստեղծել:

Ներկայումս, երբ մեր երեք ժողովուրդները տապալել են իրենց հարստատահարողների անարգ լուծը և, ձեռք-ձեռքի տված, Սովետական Միության փառապանծ ընտանիքում կառուցում են իրենց չքնաղ Հայրենիքը, մեզ՝ կովկասագետներին համար հաճելի պարտականություն է ուսումնասիրել Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության պատմությունը և ժողովուրդների լայն խավերի սեփականությունը դարձնել այն: Սովետական մեր հարցասեր ընթերցողը, բնական է, ցանկանում է իմանալ՝ թե ի՞նչպես է հիմնվել Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը, ի՞նչպես զարգացել և ի՞նչպես նորորակ է ստացել սովետական իշխանության տարիներին:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության պատմությունը ֆեոդալական և բուրժուական պատմագրության կողմից կա՛մ աչքաթող է արված եղել և կա՛մ ծուռ հայելու մեջ ներկայացվել:

¹ Ի. Վ. Ստալին, Երկիր, հատ. 5, էջ 106:

Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության պատմության լուրջ ուսումնասիրությունն առաջնահերթ հարց դարձավ և նրա դիտական լուրջ մշակումը սկսվեց սովետական իշխանության տարիներին:

Ցանկանալով մեր համեստ լուսման մուծել Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության պատմության ուսումնասիրության գործում, մենք կամենում ենք հրատարակել 1724 թվի մարտ ամսում կնքված հայ-ադրբեջանական մի պայմանագրություն, որն ուղղված է, հիմնականում, Թյուրքիայի դեմ: Պարզվում է, որ Գանձակի ադրբեջանցիները պայմանագրություն են ունեցել Ղարաբաղի հայերի հետ, որ եթե Ղարաբաղի վրա հարձակվելու լինի թյուրքական բանակը, իրենք պարտավորվում են օգնել Ղարաբաղի հայերին, իսկ եթե թյուրքական բանակը հարձակվելու լինի Գանձակի վրա, հայերը պարտավոր են օգնել Գանձակի ադրբեջանցիներին: Ուշագրության արժանի է, որ դաշնագրությունը կնքելու գործում կազմակերպչական գործուն դեր է ունեցել Պետրոս Մեծի Անդրկովկաս ուղարկած էլշին՝ Իվան-Կարապետը:

Դաշնագրության վերաբերող վավերագրերը պահվել են նախկին՝ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության պետական կոլեգիայի Մոսկվայի արխիվում, որը սովետական շրջանում անցել է Госуд. архив феодално-крепостнической эпохи պետական արխիվին, կարճ՝ ГАФКЭ-ին:

Վավերագրերը պարունակող թղթապանակը տպագիր գրականության մեջ առաջին անգամ հիշված է 1833 թվին Մոսկվայում կազարյան ճեմարանի «Собрание актов» ժողովածուի մեջ լույս տեսած վերև հիշված արխիվի «Հայկական գործեր»-ի ցուցակում: Այդ թղթապանակն այնտեղ հիշված է ընդհանուր ձևով. «Հայկական նամակներ, որոնք վերցված են հայ Իվան-Կարապետի բնակարանից նրա մահվանից հետո և ցուցակագրված ըստ բովանդակության, առևտրական Ղուկաս Շիրվանովի դասավորությամբ»:¹

Նշված հիշատակության մեջ չնայած կոնկրետ ոչինչ չի ասված մեզ հետաքրքրող վավերագրերի մասին, սակայն նրանից պարզ երևում է, որ թղթապանակի բովանդակած վավերագրերը վերցված են եղել Իվան-Կարապետի արխիվից:

ГАФКЭ-ի արխիվի այս թղթապանակի հետ, ինչպես պարզվում է, ժամանակին ծանոթ է եղել բանասեր Ա. Հովհաննիսյանը, որը թղթապանակի արաբատառ վավերագրերը նկարել է տվել և լուսանկարները թարգմանության հանձնել մեծանուն գիտնական ակադեմիկոս Հ. Աճառյանին: Վերջինս լուսանկարների տեքստը թարգմանել է և ապակետիպ հրատարակել Վ. Մ. Մուրտուզի անվան Երևանի Պետական համալսարանի հրատարակությամբ 1927 թվին: Հարգելի ակադեմիկոսը, սակայն, ձեռքի տակ չի ունեցել պարսկերեն գրված այդ վավերագրերի մասին պահանջվող աղբյուրագիտական տեղեկությունները, ուստի և դրանք հրատարակել է «Վավերագրեր հայ-պարսկական հարաբերության մասին» խորագրի տակ:

Մոսկվայի վերև հիշված արխիվում՝ ГАФКЭ-ում, ընկերոջս՝ պատմական գիտությունների թեկնածու Դ. Գաբրիելյանի հետ կատարածս պրնտումների

¹ Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, часть I, Москва, 1833, стр. 372.

² Հ. Աճառյան, Վավերագրեր հայ-պարսկական հարաբերության մասին (ապակետիպ), Երևան, 1927:

ժամանակ, «Հայկական գործեր»-ի 18-րդ դարի առաջին քառորդի թղթապանակներում հաջողվեց հայտնաբերել նշված պայմանագրերը, որոնք և ցանկանում ենք հրատարակել այժմ:

էլլու այդ թղթապանակի վրա մենք կանգ ենք առել մեր մի շարք աշխատությունների մեջ, որոնցից վերջինը՝ «Նոր վավերագրեր Դավիթ-Բեկի և նրա զլխավորած ազատագրական շարժման մասին» հոդվածն է, որը հրատարակվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրում»¹ նորահայտ բոլոր վավերագրերը մեր աղբյուրագիտական դիտողություններով կհրատարակվեն Իվան-Կարապետի մասին մեր գրած ընդամենը ուսումնասիրությունների մեջ:

* * *

18-րդ դարի առաջին քառորդում Անդրկովկասը գտնվում էր պարսկատաճկական հարստահարիչների ծանր լծի տակ: Արևմտյան Հայաստանը մինչև Արաքս գետը և Վրաստանի արևմտյան մի շարք շրջաններ գտնվում էին թյուրքական գերիշխանության տակ, իսկ Արևելյան Հայաստանը, ողջ Ադրբեջանը և Վրաստանի հյուսիս-արևելյան շրջանները — Անդրկովկասի ավելի քան չորս հինգերորդը՝ գտնվում էր պարսկական տիրապետության տակ:

Շահի իշխանությունն Անդրկովկասում նոմինալ բնույթ ուներ և տեղերում փաստական իշխանավորները խաներն էին, որոնք ինքնանկախ կառավարում էին իրենց իշխանության տակ գտնված շրջանները: Խաները կենտրոնական իշխանության առջև, հիմնականում, երկու գլխավոր պարտականություն ունեին — ուղարկել սահմանված հարկը և կովի ժամանակ ներկայանալ շահին՝ իրենց զորամասով:

18-րդ դարի առաջին քառորդում պարսկական կենտրոնական իշխանությունը, կարելի է ասել, խարխլած վիճակում էր: Պարսկաստանի շահը՝ Հուսեյնը, վարչական աշխատանքում միանգամայն անպետք էր: Նրա մասին Պարսկաստանում ռուսական դեսպան Վոլինսկին հետևյալն է գրել Պետրոս I-ին.² «... Այստեղ (այսինքն՝ Պարսկաստանում — Ա. Ա.) այժմ այնպիսի մի դուրս է, որ ինքը ոչ թե հպատակների վրա է, այլ հպատակ է իր հպատակների մոտ և, կարծում եմ, հազիվ կարելի լինի գտնել նման մեկը ոչ միայն թագավորազունների, այլ նույնիսկ հասարակ հպատակների մեջ: Ինքը ոչ մի գործի մեջ մտնել չի բարեհաճում և ամեն ինչ վստահել է իր փոխանորդ էտերմա-Դովլաթին, որն ամեն տեսակ անասունից էլ հիմար է»:²

Տեղական խաներն օգտվելով կենտրոնական իշխանության թուլությունից, ամեն տեսակ բռնություններ և կամայականություններ էին գործ դնում իրենց հպատակների նկատմամբ և կեղեքում ժողովրդին: Մեղ հասել է ժամանակակից պատմիչներից մեկի՝ Գանձասարի Եսայի կաթողիկոսի ուշագրավ նկարագրությունը պարսիկների հարկահանության մասին, որից երևում է, որ 18-րդ դարի սկզբներում ոչ միայն ծանրանում է սահմանված հարկը, այլև նորանոր հարկեր են դրվում ժողովրդի վրա: Բացի այդ, ժողովրդի վրա է ծանրանում պարսկական պաշտոնեության աշխատավարձը, որն առաջ տրվում էր պետական գանձարանից: Անհրաժեշտ ենք համարում այդ մասին մեջ բերել

¹ Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1951 թ. № 8, էջ 61—73:

² С. М. Соловьев, История России с древнейших времен, кн. IV, т. XVIII, стр. 665.

ի հատված նսայի կաթողիկոսի պատմությունից. «Եւ ցրուեցան զօրքն
 [պարսից] ընդ երկիրս եւ ընդ գիւղօրայս ի թիւ արկեալ գրովն. եւ քանզի յոյժ
 ծանր էր լուծն եւ ոչ կարէին տանել, վասն որոյ շարշարէին եւ կեղեքէին, եւ
 օարդելով առնուին ըստ չափու իւրեանց... Նոյնպէս ի վաճառականաց, եւ յա-
 մենայն արուեստաւորացն առին: Եւ այսպէս ամի ամի զգլուխսն համարէին,
 եւ հարկահանքն եկեալ ճշդիւ օրոնուին: Յետ այսորիկ միւս եւս կերպիւ հարկս
 լնդին, եւ անուանեցին զայն Աւախուրան. դարձեալ միւս եւս եղին, եւ զայն
 ասացին Շահգաւի ախրաջաթ. միւս եւս յաւելին, եւ անուանեցին Շէշտինար,
 եւ զայս երեքպատկեցին: Եւ դարձեալ կրկին եւս եղեւ հրաման ելանիլ եւ գրել
 դամենայն սահմանս երկրի, գիւղօրէից եւ ագարակաց, զհող, զջուր, զայգի,
 զանդաստան, զծառ, զտունկ, եւ զամենայն ինչ որ պիտոյ է մարդկան՝ առհա-
 սարակ զամենայն գրեցին, թէ՛ հայոց, եւ թէ՛ այլազգեաց... Զայս ամենայն
 զոր գրեցաք՝ նորահնար շարիք էր, զոր եղին ի վերայ սուսջնոյ սահմանեալ
 հարկացն, որ եւ առաջինն եւս ծանրագոյն էր քեռն ի վերայ ժողովրդեան.
 այժմս փոխանակ թեթեւացուցանելոյ, զայսքան եւս յաւելին ի վերայ: Եւ դար-
 ձեալ որպէս սովորութիւն է պարսից իշխանութեան՝ յամենայն քաղաքս տէ-
 րութեան իւրեանց, եւ ի վերայ ամենայն երկրի, պետս եւ գլխաւորս զօրաց
 կացուցանել, որպէս խան, սուլդան, ղուլբեկի, վէլիր, դարուղայ եւ թիուղար:
 Ճառաչումն որոյ մի անգամ այսպիսեացս իշխանութիւն ինչ տային, ո՛չ դիւ-
 րեաւ փոփոխէին եւ առնուին ի նմանէ. բայց թէ մեծ յանցանքն ինչ, եւ կամ
 զնաս առնն յայտնիր, եւ կամ վասն զրկողութեան եւ ազահութեան գանդա-
 տողք եւ դատախազք երթային ի դուռն արքայի, եւ զյանցանս առնն յայտնի
 կացուցանէին, եւ ապա հազիւ ուրեմն առնուին յառնէն յայնմանէ զիշխանու-
 թիւնն զայն: Իսկ այժմս եւ այսու թագաւորաւս ոչ այսպէս, այլ թագաւորն եւ
 նախարարք իւր կաշառակուր լեալ՝ փոյթ ընդ փոյթ փոփոխեալ հանէին. եւ ի
 միում ամի երկուս եւ երիս տեարս եւ իշխանս՝ ի միում քաղաքի եւ գաւառի
 զկնի միմեանց առաքէին: Եւ նոքա եկեալ որպէս և ինքեանք կաշառօք ստացեալ
 էին զիշխանութիւնս իւրեանց, նոյնպէս և նոքա այնպէս ամենայն զղստ և
 դիրաւունս ժողովրդեան ի բաց եղեալ՝ կեղեքէին, կողոպտէին զհնազանդեալս
 իւրեանց. սոյնպէս առնէին եւ օրինապահք դպիրք նոցա, այսինքն դատաւորք,
 շխալըսլամք, շէխք, եւ որոց զազիս ասեն: Դարձեալ յաւելին միւս եւս շարիս,
 զի որ միանգամ տեարք էին գիւղից եւ ագարակաց, նաեւ վարձաւորք՝ այսինքն
 զօսլուղ հատեալ, զօրապետք եւ զօրք որքան դրամոյ չափ որ ոք եւ ունէր, զնո-
 րին տասանորդն եւս հատին, եւ թագաւորական արարին. իսկ նոքա ոչ յիւրե-
 անց դրամոցն տային, այլ զայն եւս յաւելին եւ եղին ի վերայ իւրաքանչիւր
 հնազանդելոցն, և այնպէս սոռնէին: Նմանապէս և այլ բազմահոյ շարիս յոր-
 դեցին. ուստերս և դստերս ուժգին քարշելով, զարս և զկանայս բռնի ուրացու-
 ցանելով, եւ զյետամնացելոց զինչսն եւ զստացուածսն եւ զգանձս յափշտա-
 կելով՝ եւ ուրացողացն տալով. որպէս և որքան տօվլաթաւորս եւ մեծատունս
 աշօք մերովք տեսաք ի Զուղայ եւ ի յերեւան՝ որ ի վերջին աղքատութիւնն եւ ի
 թշուառութիւնն հասեալ էին. եւ հարցեալ զպատճառն տեղեկացաք, որ վասն ու-
 րացողացն եւ յափշտակութեան ընչից իւրեանց էին եղեալք այսպէս: Այնպէս
 զամենայն բարեկարգութիւնս բարձին յերկրէ, զորս մանրամասնաբար ոչ գրե-
 ցաք...»¹

¹ Ն ս ա յ ի կ աթ. Հ ա ս ա ն - Զ ա յ ա յ ւ ա ն ց, Պատմութիւն համառօտ Աղուանից
 երկրի, Նրուսադէմ, 1888, էջ 15—18:

Մեզ է հասել Ղարամի որդի Պետրոսի մի հիշատակարանը, որի որիչը նույնպես գանգատվում է պարսկական կառավարության պաշտոնյաների կաշառակերության, բռնությունների, շուտ-շուտ փոփոխվելու մասին: Նա ևս հաստատում է խաների շուտ-շուտ փոփոխվելու փաստը. «Ես, Ղարամի որդի լոկ անուն կոչեցեալ սարկաւազ Պետրոս(ս), յայտ արարից զյանցանս իմ ձեզ, հարք եւ եղբարք... Գեղի մէջն մտայ գրագրութիւն արարի, ամբարտաւանութիւն արարի, աղքատաց արեան հացն կերի, յերեսպաշտութեան ճանապարհովըն գնացի... Այսմ ամի (այսինքն 1703 թվին) երկու միմէլ եկաւ Նախիջեւան, շատ նեղութիւն տվին այս տառապեալ քրիստոնէից, որ միայն մեր գեղին Դժ (400) թուման գնաց: Դարձեալ, Երեւանայ Նախիջեւանու խաներն երկու տարէն միջում շորս անգամ փոխեցան, գեղօրէից շատ-շատ խաւարաթ տուին (վնաս տվին — Ա. Ա.), որ գրել ունման չէ»¹

Թե ի՞նչ վիճակում է գտնվել աշխատավոր գյուղացի ընտանիքն այդ ժամանակ, կարելի է պատկերացնել 1725 թվի հունիսի 15-ի մի նամակից, որը սլահվել է էլշի Կարապետի թղթապանակում: Այդ նամակում մայրը գրում է Ռուսաստանում գտնված իր որդիներին. «Ա՛յ մեր սհապներ, այս է որ երեք-չորս գիր մեր ամենայն աֆալն, դարդն տիլն գրած ենք, ողորկած ձեզ վրայ, ոչ թէ մին գրին պատասխան չի եկալ թէ մեք այլ խաթիրչամ ելանինք... Ա՛յ Աստուծոյ բանտաք, այս ի՞նչ է մեր քաշում շարշարանքն. ո՛չ մեռեալ ենք, ո՛չ կենդանի... ամա՛ն, Աստուծոյ խաթրին համար, եկիք, հասիք: Աստուծոյ շաբաթն մին անգամ թաւջի են անում, պարք չի ընկնում: Էհտիբար չիկա. միսս մհակ մեք ի՞նչպէս անիմք, շիտակ որ առիքն շարիտնք գծել վղրնիս խեխտել, դուք էք մնալ դատաստանին պարտական... Քրիստոսի շարշարանքն զմեզ տալիս (ե)ն, այլ իրզը սուրաթ չի մնացել... Ամա՛ն, ամենայն բան գրիլն մուսպաթ չի, միթկ արիք, յիմացիք, այս ի՞նչ կրակ այ վիլիեթիս վերա, այլ գեղ աւաղանլուղ (շենք — Ա. Ա.) չի մնացել, ամէնն յէսիր յաղման ին արալ (գերի են արել — Ա. Ա.), մնացել այ միայն մեր գեղն, Աստուած փրկի, Տէրն ազատի, սարը քար ասկար կոխած է: Եկին գրդէնի մեր նահիրն (նախիրն — Ա. Ա.) ջիպ տարին, մեր եզինքն այլ տարին, մնացինք այսպէս բէքար մարլաղ: Վարը վաստակ ունինք, կալը կասա, ի՞նչ անինք, ինչպէ՛ս հաւաքինք: Եզն չի կայ, էհտիբար չի կայ, փող չի կայ թէ եզն առնինք, գեղումն տասը եզն չի կայ, ամէնն տարած են, կորցրած: Գեղին սօխախնները շորս թարաֆն, ամէնն քուշաբանտ է (շրջապատված է — Ա. Ա.), ոչ գիշերն ունենք դադարք, ոչ ցերեկն, շիտակ որ ջիպ փուշացել (ե)նք...»²

Պարսկականից ավելի ծանր էր թյուրքական լուծը — կեղեքում, բռնություն, հարստահարություն: Թյուրքիան գտնվում էր այդ ժամանակ ֆեոդալիզմի ամենացածր, բարբարոսական ստադիայում³

Ազատասեր Անդրկովկասի ժողովուրդները, հասկանալի է, որ չէին կարող այլևս հանդուրժել օտարերկրյա լուծը և պիտի պայքարեին իրենց ազատության և անկախության համար:

Սկսած 18-րդ դարի սկզբներից Անդրկովկասում ավելի է ծավալվում ժողովրդա-ազատագրական շարժումը, նպատակ դնելով ռուսաց օգնությամբ

¹ Հայկական ՍՍՌ Մատենադարանի ձեռագիր № 604, թ. 199ր:

² Г. А. Ф. К. Э., ф. Армянские дела за 1724 г., № 4, л. 41.

³ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, стр. 374.

տապալել հարստահարողների անարգ լուծը: Անդրկովկասի ժողովուրդները ավելի սերտ հարաբերությունների մեջ են մտնում Ռուսաստանի հետ և ոռոգ ժողովրդին սկսում են նայել որպես իրենց ազատարարին:

Թե այդ ժամանակ ինչպիսի մեծ սպասումներ են ունեցել Անդրկովկասի ժողովուրդները Ռուսաստանից՝ իրենց ազատագրության գործում, երևում է Սղնախների նրից վանքի կաթողիկոսի Պետրոս Մեծին ուղարկած մի նամակից. «... Վերև Աստուած, ներքև դու,— գրել է կաթողիկոսը Պետրոս Մեծին,— քեզանէ ի զատ ոչ ոք չունեմք զմեզ ազատելոյ այս տառապանացս, այլ լեր իբրև զմեծն Մովսէս մարգարէ և ազատեալ զմեզ ի ձեռաց փարաւօնի...»¹

Ահա այս իրադրության մեջ է, որ Անդրկովկաս է գալիս Պետրոս Մեծի էլչի Իվան-Կարապետը և քաղաքական լայն աշխատանք ծավալում այստեղ:

* * *

1723 թվի վերջերին Մոսկվայից հայկական Սղնախներն (խամսայի մելիքություններ) է ժամանում Պետրոս Մեծի պատվիրակ (էլչի) Իվան-Կարապետը: Նա ցարական արքունիքից Անդրկովկաս է ուղարկվում արտակարգ լիազորություններով և հանձնարարություններով: Էլչին իր հետ բերում է Պետրոս Մեծի հրովարտակը՝ հայ ժողովրդին իր հովանավորության տակ վերցնելու մասին:

Իվան-Կարապետը, ինչպես երևում է մեզ հասած վավերագրերից, վայելել է ցարի կատարյալ վստահությունը: Պետրոս Մեծը հայ ժողովրդին ուղարկած իր հրովարտակում հանձնարարում է տեղացիներին, որ Իվան-Կարապետի նկատմամբ «ցույց տրվի լրիվ և կատարյալ վստահություն»:²

Պետրոս Մեծի պատվիրակը գալով Սղնախները, քաղաքական լայն աշխատանք է ծավալում այնտեղ: Նա, ինչպես երևում է, ցարական արքունիքից հանձնարարություն է ունեցել Անդրկովկասում կատարել հետևյալ աշխատանքները. ա) տեղացիներին վերցնել ոռոգաց հովանավորության տակ՝ գրավոր ձևակերպելով հպատակությունը, բ) հաշտեցնել իրար հետ տեղի գժտված ֆեոդալներին, գ) կազմակերպել նրանց զինական ուժը թյուրքական ագրեսիայի դեմ և դ) ուսումնասիրել տեղի հանքային հարստությունները: Չնայած պատվիրակին տրված այս հանձնարարությունները գրավոր չի ձևակերպված, սակայն դժվար չէ կռահել այդ ամենը պատվիրակի զեկուցագրերից, որոնք սխտեմատիկաբար նա ուղարկել է իր Անդրկովկաս ժամանելուց հետո:

Գալով Անդրկովկաս, էլչին իր քաղաքական աշխատանքն սկսում է ծավալել Ղարաբաղում: Նրա առաջին գործն է լինում ամենուրեք հանդիսավոր իրադրության մեջ ցույց տալ տեղացիներին Պետրոս-Մեծի հրովարտակ-հուշագիրը և առաջարկել նրանց ոռոգաց հպատակություն ընդունել: Տեղացիները սիրահոգաբար համաձայնում են: Ռուսաց հպատակությունն ընդունող «նորընծաներ»-ին էլչին երդվեցնել է տվել և հավատարմության գրեր վերցրել այն մասին, որ նրանք, որպես ոռոգաց հպատակներ, պարտավորվում են Ռուսաստանի հավատարիմ քաղաքացիներ լինել և պարտաճանաչություն մի կատարել այն բոլոր հրամանները, որ կտրվեն իրենց կայսեր կողմից:

¹ Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, стр. 344.

² Էլչի, Հայոց պատմություն, Երևան, 1946, էջ 630.

³ Эзов, Сношения Петра Великого с арм. народом, стр. 352—353.

Մեզ են հասել հայկական և ադրբեջանական համայնքներից էլշու վերցրած հավատարմության մի շարք գրեր, որոնք իրենց բովանդակությամբ շատ նման են իրար: Այս հավատարմագրերից, որպես նմուշ, անհրաժեշտ ենք համարում բերել Դիզախի և Վարանդայի մելիքների և յուզբաշինների տված հավատարմության գիրը.

«Պատճառ գրոյս այս է, որ թվին Փրկչին 1724, յունվար ամսին շորսումն, մեք Հայոց երկրիս, որ է Դիզաղոյ և Վարանդոյ երկրիս ուզբաշէքս, և մեք մեր թամամիյ մեծօվ և փոքրօվ, վարդայպետօվ և քահանայիւք, մէլիքօվ և քոյիսողէքօվ, քէվիսօվ և ըռայաթօվ, թամամի մեր ասկարօվս, ներքոյ դրեալքս, մեր կամօքն և մեր յօժարութեամբն ծառայ դարցանք վերոյ դրեալ Մեծին Արքային (այսինքն՝ Պետրոս Մեծին — Ա. Ա.), որ էս թարեղէն (այս թվականից — Ա. Ա.) մինչի գալուստն Քրիստոսի, կամք ներքոյ հրամանին, որ ինչ որ մեր Մեծ թագաւորն մեզ հրաման առի, ուր հրամանն կատարեմք: Եւ եթէ ինչ որ հրաման առի, հրամանն կատարեմք ոչ, դառնամք, և թէ խաբեմք, մեր գլուխն և մեր ապրանքն թագաւորին լինի, առաջին Աստուծոյ թագաւորն անպարտ լինի և մեք պարտական լինեմք: Գրվեցավ գիրս Շօշոյ Սղնաղումն թիվն հայոց ԱՌՃՀԴ (1724 թ.) յունվար ամսուն»¹

Հավատարմագիրը ստորագրել և կնքել են Սղնախների 18 մելիքներ, յուզբաշիններ և բարձրաստիճան հոգևորականներ:

Հավատարմության այս գրերը խիստ արժեքավոր վավերագրեր են 'ուվկասի ժողովուրդների պատմության համար: Նրանցից պարզ երևում է, որ Անդրկովկասի երեք ժողովուրդները՝ հայերը, վրացիները և ադրբեջանցիները, Անդրկովկասի Ռուսաստանին միակցվելուց շատ առաջ, իրենց բխտը անվերապահ կապել էին մեծ Ռուսաստանի հետ, ընդունել էին ռուսաց հպատակություն և Ռուսաստանից էին ակնկալում իրենց ազատությունը:

Նորահայտ վավերագրերը գալիս են լիովին հաստատելու ընկ. Բաղիրովի այն պնդումը, որ՝ «... Թյուրքական և պարսկական զավթիչների դեմ մղած իրենց պայքարում վրացի, հայ, ադրբեջանցի ժողովուրդների և 'հաղստանի ժողովուրդների առաջավոր մարդիկ իրենց հայացքն ուղղել են դեպի Ռուսաստան և նրանից օգնություն և աջակցություն փնտրել»:²

Էլշին, համեմատաբար, ավելի մեծ և դժվարին աշխատանք է սկսում Ղարաբաղի դժուված մելիքներին իրար մոտ բերելու և հաշտեցնելու ուղղությամբ: Էլշու զեկուցագրերից երևում է, որ խամսայի մելիքություններից յուրաքանչյուրը մի առանձին կիսանկախ իշխանություն է կազմել՝ իրենից դուրս չճանաչելով ոչ մի օրենք և իրավունք:

Զկա էլշու զեկուցագրերից մեկը, ուր նա զայրույթով չխոսի մելիքների անմիաբանության և նրանց թշնամական փոխհարաբերությունների մասին: Այսպես, իր զեկուցագրերից մեկում նա հետևյալն է գրում ցարական արքունիքին. «Էստոնց մէջումն (այսինքն՝ մելիքների միջև — Ա. Ա.) գլխաւոր չկայ, մինգմինոյ թաբէ չեն (այսինքն՝ միմյանց չեն ենթարկվում — Ա. Ա.), յամիշայ ուրէնց մէջումն կռիւ այ, նայ ասում այ ես լինեմ մեծ, մինն ասում այ

¹ ГАФКЭ, ф. Армянские дела за 1724 г., № 4, л. 19.

² М. Д. Багиров, К вопросу о характере движения мюридизма и Шамиля (см. „Большевик“ № 3 за 1950 г., стр. 35).

թէ ես լինեմ մեծ. էսօր էլ զօշուն ան բոլորէլ, գնացէլ մինը զմինոյ խետ կոխ ան առում»¹:

Էլշին գանգատվում է նաև Ղարաբաղում գոյութիւն ունեցող ալան-թալանի և առ ուղուի մասին: Մելիքներից ամեն մեկն իր համար առանձին խումբ կազմած քանգում է իր հարևան մելիքի գյուղերը, կողոպտում բնակիչներին և ամեն տեսակ վայրագութիւններ անում. «Պաս շօրեքշաբթի օրըն,— արձանագրել է էլշին իր զեկուցագրերից մեկի սևագրութեան վերջում,— Սարքիսն, Աբրահամն եկին մին գեղ չափմիշ արին, հայի գեղ»:²

Մելիքների այս թալանը, իհարկե, չէր սահմանափակվում միայն համայնքի մելիքութիւններով. նրանք մեծ խմբեր կազմած, կողոպտուի էին գնում և հարևան երկրները: Այսպիսի խմբերով ավարառութեան գնալն այն ժամանակ կոչվել է «չափղուն»: Էլշին իր մի զեկուցագրում հայտնել է ցարական արքունիքին. «Յեփ չափղուն ան գնաման, տասը-քսան հազար մարդ ան գնաման չափղուն»:³ Պիտի նկատի ունենալ, որ այս ամբողջ ժամանակ, առաջին հերթին, տուժում էր, իհարկե, գյուղացին, աշխատավոր շինական գյուղացին, որն իր արյուն քրտինքով կերակրում էր իր մեծ ու փոքր ֆեոդալներին:

Սղնախների ահա այսպիսի ծանր իրադրութեան մեջ էլշին շատ մեծ հաշտարար աշխատանք է սկսում: Տարբեր միջոցներով՝ համոզելու, սպառնալիքի և այլ միջոցներով էլշուն հաջողվում է իրար մոտ բերել համայնքի մելիքներին, հաշտեցնել իրար հետ և ստորագրութիւն վերցնել նրանցից այն մասին, որ նրանք, որպես ռուսաց հպատակութիւն ընդունողներ, վերջ կդնեն թշնամութեանը և հաշտ կապրեն իրար հետ:

* * *

համայնքի մելիքներին իրար հետ հաշտեցնելուց հետո, էլշին ակտիվորեն զբաղվել է հայ-ադրբեջանական հարաբերութիւնների հարցով: Նա ամեն ջանք գործ է դրել հայ-ադրբեջանական քաղաքական շրջանը մոտեցնել իրար և նրանց մեջ ստեղծել վստահելի բարեկամութիւն՝ համախմբելով նրանց ընդդէմ ընդհանուր թշնամու՝ թյուրքական ագրեսիայի:

Պետք է ասել, որ ռուսաց արքունիքի Անդրկովկասում վարած հավաքարար, հաշտարար այս քաղաքականութիւնը լիովին համընկնում էր տեղացի ժողովուրդների ցանկութեանը, որոնք ամենից շատ էին տուժում քաղաքական անկայուն վիճակից և միջֆեոդալական կռիւներից:

համայնքի մելիքութիւնների մոտիկ դրացիները Գանձակի ադրբեջանցիներն էին: Այստեղից էլ հենց էլշին սկսում է իր հաշտարար գործունեութիւնը և շատ շուտով դրական արդիւնքների հասնում: Նա կարողանում է հաշտեցնել համայնքի և Գանձակի քաղաքական ղեկավար շրջանները իրար հետ: Էլշու այդ հաջողութիւնները ինքնին վկայում են, որ նման աշխատանքի համար Անդրկովկասում, իրոք, բարենպաստ հող նախապես գոյութիւն ուներ:

Մեր ձեռքի տակ գտնված նորահայտ վավերագրերից երևում է, որ 1724 թվի փետրվարի 22-ին, այսինքն էլշու գալու երկրորդ ամիսը դեռ չլրացած, համայնքի հինգ յուզբաշիները և Գանձակի հայերը, պաշտոնապես, գրավոր,

¹ ГАФКЭ, ф. Армянские д. № 4 за 1724, л. 64—65.

² Նույնը, թ. 24:

³ Նույնը:

⁴ Նույն թղթապանակը, 33:

դիմել են էլլուն և խնդրել, որ նա միջնորդ հանդիսանա և հաշտեցնի իրենց Գանձակի աղբրեջանցիների հետ: Սղնախների այս հինգ յուզբաշիների և Գանձակի հայերի դիմումի մեջ, որը պահվել է էլլու գործերում, ասված է հետևյալը. «Մեր, Շօշի եղեալ ուզբաշէքս՝ ես Թարխանս, և ես Բաղիս, և ես Փանիս, և ես Սարդիսըս, և ես Սատեղըս, մեր թաբուն թալեղօվս և մեր քէվխայ քաղխոդէքօվս, և Գանջոյ խայերօվս, մեծօվ և փոքրօվ, խնդրեցինք Իվան-Կարապետէն, որ մեր կողմանէ մին գիր գրի Գանջայ մայալին քաղխոդէքոնց վերէն, որ մեր միջումն բարըշոթուն ձգի, որ մինըզմինոյ խետ բարըշուցանի, որ մեր և գանջեցիք բարիշ լինենք, մինչի մեր թագայորըն (այսինքն՝ Պետրոս Մեծը — Ա. Ա.) գայ մեզ հասնի: Գրեցաւ թվին ՌՃՀԳ (1724 թ.) փետրվարի ամսի ԻԲ-ումն (22-ին)»:¹ Դիմումը ստորագրել և կնքել են վերև հիշված չորս յուզբաշիները:

Սղնախների յուզբաշիների և Գանձակի հայերի այս դիմումը, ինչպես երևում է էլլու մի այլ նամակից, նրան տրվել է իր պահանջով. հավանական է, էլլին նախքան գանձակեցիների հետ պաշտոնական բանակցություններ սկսելը, անհրաժեշտ է համարել ձեռքի տակ ունենալ հայ յուզբաշիների և մելիքների այս դիմումը, որպեսզի վստահորեն կարող լինի սկսել իր բանակցությունները մյուս կողմի հետ:

Սղնախների յուզբաշիների և Գանձակի հայերի այս դիմումը ձեռքի տակ ունենալուց հետո, էլլին, նույն օրը, նամակ է գրել Գանձակի աղալարների, քաղխոդանների և մյուս ղեկավարների վրա և առաջարկել ռուսաց հպատակություն ընդունել և հաշտվել հայերի հետ:

Իվան-Կարապետի այս նամակը, որ հասել է մեզ, սկսվում է սովորական բարևով. «Իվան-Կարապետէս բարև հասցէ Գանջոյ եղեալ աղալարի և քաղխոդէքոնց մեծիդ և փոքրիդ: Մալում լինի ձեզ, որ եկի էս խայերին Սղնաղանին, տեսի, որ քանի մարդ մինըզմինոյ խետ խոօվ ին, բարշացուցի, որ էլ մարդ չէ մնաց, ոխջին գլուխն մէկ արարի»:²

Այնուհետև, էլլին իր նամակում նշում է Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքը դեպի իր հպատակ ժողովուրդները՝ որպես օրինակ մատնացույց անելով Դերբենդի, Գիլանի և Բաքվի գրավման ժամանակ ռուս զորքերի ցուցաբերած հոգատարությունը տեղի բնակչությանը. «Մեր թագաւորն շայի ազգին շատ այ սիրում. Դարբանդ առէց, Գիլան առէց, մին քորդի քինթ չէ բլցոց: Բաքոյ եօթ օր կոխ արար, յեփ առինք, մտանք բերթն, մէկ մարթ չէ սպանեց»:³

Այնուհետև էլլին անմիջապես անցնում է իր նամակի բուն նյութին և առաջարկում Գանձակի աղբրեջանցիներին ռուսաց հպատակություն ընդունել և հաշտվել իրենց դրացի հայերի հետ. «Նւ ես լսում ամ,— գրում է նա իր նամակում,— որ դոք էս խայէրին խետ զըդ ունիք, մինըզմինոյ շափմիշ էք անում, էդ խօվ լէ՛վ չէք անում... և դոք որ թէ կողէք մեր թագաւորին թաբէ լինէք, էս խայերին խետ պիտի դօստ լինէք, թէ կողէք որ օսմանլվին ղուլուղ առէք, էն էլ ղոք լէ՛վ գիտէք, ախտիար ունէք»:⁴

Անհրաժեշտ է նկատել, որ հայ և աղբրեջանական ժողովուրդները երբեք

¹ ГАФКЭ, ф. Арм. л. № 2 за 1739 г., л. 62.

² Նույնը, թ. 37:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

թշնամութիւն չեն ունեցել իրար նկատմամբ. էլչու ականարկը, իհարկե, վերաբերում է իշխող մեկիքական և աղալարական տիրող շրջաններին, որոնք անձնական նեղ շահերից ելնելով, իրոք, «շափմիշ» են արել իրար և թշնամութիւն վարել այնպես, ինչպես որ նույն հայ կամ աղբեջանցի ֆեոդալները «շափմիշ» են արել համազգի իրենց ֆեոդալներին և նրանց հետ թշնամութիւն վարել:

Նամակի վերջում էլչին խնդրում է պատասխանել իրեն, նորից հավաստիացնելով, որ եթե նրանք մտնելու լինեն ռուսական հովանավորութեան տակ, նրանց մաղն անգամ չի պակսի. «էս գրին ջողաբն մեզ գրես, որ ես յիմանամ՝ ձեր փիքրն առնեմ: Եւ թէ կողէք, որ մեր թագավորին ղուլուղ առէք, խաթիրջամ կացէք. որ շայի ազգին ղլխիցըն մին մաղ չէ պակսի, որ ձեզ նեղութիւն չեն տալման, էլ ախտիար ունէք»¹

Հայերի և աղբեջանցիների մեջ վարած այս հաշտարար աշխատանքի մասին էլչին անհրաժեշտ է համարել իրազեկ դարձնել ռուսաց արքունիքին: Նամարտի 6-ին գրած իր ղեկուցագրում արքունիքին հայտնել է, որ գանձակեցիները նամակ են ուղարկել իրեն և խնդրել հայտնել՝ թե ինչ նպատակով է նա եկել Անդրկովկաս և ինչով կարող են իրենք օգտակար լինել: Իսկ ինքը նամակ է գրել գանձակեցիներին և առաջարկել, որ նրանք ռուսական հպատակութիւն ընդունեն և հայերի հետ «մին տեղ սէր կան, բարը շին»²

Էլչու այս առաջարկութիւնը ստանալով, գանձակեցիները նրանից յոթ օր ժամանակ են խնդրել խորհրդակցելու համար: Էլչու կարծիքով, գանձակեցիները հակված են մտնելու ռուսաց հովանավորութեան տակ. «Գանջոյ երկրին մարդկանց մթալաբն էն այ,— գրում է նա,— որ մեր թագավորին թաքէ լինին՝ չէ թէ օսմանլին»: Էլչին խոստացել է արքունիքին՝ իր բանակցութիւնների արդյունքների մասին գրել հաջորդ ղեկուցագրում:

Էլչու հաջորդ՝ մարտի 18-ին գրած ղեկուցագրից մենք իմանում ենք, որ Գանձակում նրա նամակը ստացվելուց հետո, գանձակեցիները մարդ են ուղարկել Մահմադ Ղուլի խանի մոտ և կանչել նրան: Վերջինս եկել է Գանձակ, խորհրդակցել են իրար հետ, համախոսական են կազմել, դիմումներ գրել և ցանկութիւն հայտնել ռուսական հպատակութիւնն ընդունելու համար: Այդ նպատակով նրանք էլչու մոտ են ուղարկել չորս հոգուց բաղկացած մի պատգամավորութիւն՝ Խա բեկի և Խոսրով բեկի գլխավորութեամբ: Այդ մասին էլչին բր ղեկուցագրում գրում է. «Եւ իմ աղարկած գիրն, որ Գանջոյս խալղն որ տեսէլ ին, աղարկէլ ին Մահմադ Ղուլի խանին: Եւ խանըն եկել էր Գանջա, մաղար էր շինէլ, չորս մարդօվ աղարկէլ էր իմ կոշտըն, երկուքն մեծ մարթ այ, որ մինին անումն Խա բեկ այ և մինին անումն Քայի Խոստրով բեկ այ: Եւ բանդիս վերէն էլ գիր էր գրէլ և մինն մազար ա(յ) Գանջոյ խալղին մրովն. և մին զիր էլ կաղարօվ քիսակի միջումն՝ խանի մրօվն մրած այ»³

Ակնարկված համախոսական գրութիւններից մեկը Գանձակի աղբեջանցիների հավատարմութեան գիրն է, որի մեջ նրանք իրենց հպատակութիւնն են հայտնում ռուսաց արքունիքին, խոստանալով հավատարիմ գտնվել նրան: Համախոսականը կնքված է հարյուրավոր կնիքներով և բացառիկ արժեք ունի և գրայրակից Աղբեջանի ժողովրդի Ռուսաստանի հետ ունեցած հարաբերութիւնների պատմութեան համար:

¹ ГАФКЭ, ф. Арм. д. № 2 за 1739 г., л. 37.

² Նույնը, л. 47.

³ Նույնը № 4 за 1724 г., л. 26.

Ագրաբեջանական ժողովրդի ռուսական հպատակության տակ մտնելու այդ փաստը պատմական խիստ կարևորություն ունեցող փաստ է, և հակառակ բուրժուա-նացիոնալիստական որոշ պատմաբանների խեղաթյուրումներին, անվերապա հցույց է տալիս, որ ագրաբեջանական ժողովուրդը շատ վաղուց, դեռևս 18-րդ դարի առաջին քառորդում, իր հայացքը որոշակի ուղղած է եղել դեպի Ռուսաստան և օրը-օրին սպասել ռուսաց օգնությանը՝ թյուրքա-պարսկական լուծը վերջնականապես թոթափելու համար:

Գանձակից էլլու ստացած համախոսականներից մյուսը վերաբերում է հայ-ագրաբեջանական բարեկամական հարաբերությունների ամրացմանը: Այդ համախոսականում Գանձակի բնակիչները երգվում և խոստանում են, որ եթե գտնվեն մարդիկ, որ «հարձակում գործեն հիշյալ հայ ժողովրդի վրա և թալանեն ու ձեռնաձգություն առնեն, այդ բաները գործողներին բռնելով այդ անձին այնպիսի պերճախոս խրատ պիտի տան, որ ուրիշներին օրինակ լինի, իրեն պիտի խրատեն, տունը պիտի քանդեն և բոլոր ինչ որ ավարից ու թալանից է բերել, կրկնակին գրավելով, տիրոջը պիտի հանձնեն»: Համախոսականում նրանք նշել են, որ իրենց ուխտն ու պայմանն անխախտ է. «Այս մասին բոլորը միասիրտ և միաբան, երգմանակից և համախորհուրդ լինելով, իբրև քարի վրա արձանագրված, հաստատուն ուխտ և պայման դրին և խոստովանեցան»: Համախոսականի վերջում նրանք ավելացրել են. «Ձենք թող տալ, որ այս կամ այն տեղ հայերին մի վնաս հասնի, ամեն բանով հաստատ և ապահով լինի»: Համախոսականը ստորագրել և կնքել են՝ Ալիհաղրեթ շեյխուլիւլամը և 35 այլ անձինք: Նա գրված է պարսկերեն:

Կարևոր է նշել, որ այս համախոսականը Գանձակում փողոց առ փողոց շրջելով, վերցրել է տեղի բնակչության հավանությունը: Համախոսականին հավանություն են տվել Գանձակի 80 փողոցի բնակիչները (հիշված են բոլոր փողոցների անունները): Ի դեպ, այս վավերագիրը արժեքավոր է նաև Կիրովաբադի պատմության համար:

Էլլու նամակներում եղած մի այլ տեղեկությունից մենք իմանում ենք, որ էլլու մոտ Գանձակից ուղարկվել է մի այլ պատգամավորություն երեք գրություն, մեկը հասցեագրված էլլուն, իսկ երկուսը՝ ռուսաց արքունիքին:

Ուղարկված այս գրություններից հետաքրքիր է գանձակեցիներից էլլուն ուղարկվածը, որի համառոտ բովանդակությունը էլլին բերում է իր վերև հիշված ղեկուցագրում: Գանձակեցիները էլլուց խնդրել են, որ նա իր կողմից նամակ գրի ռուսաց արքունիքին և խնդրի, որ 1.000—2.000-ի շափ ռուսական մի զորամաս ուղարկվի Գանձակ, որի ժամանումը բարոյական խոշոր նշանակություն կարող է ունենալ, որովհետև տեղացիները խրախուսված դրանով. կկարողանան դիմադրել թյուրքերի հարձակմանը, մինչև որ ռուսաց բանակը կարողանա օգնության հասնել. «Ինձ էլ գրել ան [գանձակեցիք] թէ՛ Աստուծոյ խաթեր համար, դու էլ գրիր, որ ըստի դոշուն, շատ կամ փոքր, 2.000 կամ 1.000 մարթ գայ, որ անումն մեր թագաւորին լինի, Գանջոյ քաղաքումն նստի, որ անումն լինի՝ թէ ռուստին դոշումն եկել այ, որ օսմանլուն գալիս այ, չընի թէ մենք կորենք, զրա օսմանլիցն վախման ան. յէնց ասմ ան՝ թէ 1.000 մարթ ըստիցն գան, մտին մեր քաղաքն, թէ վրացի կամ հայ, ղզլբաշ, մեր, որ

1 Հ. Աճառյան, Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությունների մասին, էջ 88:

2 Նույն տեղում:

մարթիքըն լսեն՝ թէ ռուստն արեկ մեզ քօմակ, մեր ղօշումին սիրտն կէ պրկվի, մենք ալ գիտալ անք, օսմանլուին խետ կռիւ կանենք, օսմանլվին ջողար կտանք, մինչի թագաւորն գայ մեզ քօմակ»¹

Այս նամակում դանձակեցիները նախազգուշացրել են թագավորի էլշուն, որ եթե ռուսական բանակը օգնության չհասնի տեղացիներին, ապա տեղի աղբիւրքեցանցի, հայ և վրացի ժողովուրդները ձեռքից կգնան, որովհետեւ տաճկական բանակը թալանելով մոտենում է արդեն Գանձակին. «Եւ թէ թագաւորն [օգնութիւն] չէ լինի և թագաւորին ղօշումըն մեզ չէ խասանի, մեք և վրացիքըն, և հայոց ազգըն ոտի տակում կէ կօրիյ, զրայ ասում ան թէ՝ օսմանլուն գէ դոյ Գանջայ: էլ ախտիարն թագաւորին այ, զրայ օսմանլուն եկել այ Գանջոյ մօտիկ, չափմիշ (այ) արարէլ. ինչ տեղ որ չափմիշ (այ) անում, միջումըն նստման այ»²

Մեզ հասել է գանձակեցիների այդ դրության պարսկերեն բնագիրը, որի մեջ նրանք խնդրել են. «Արքայական դռնից մեզ թշվառներիս օգնություն հասնի և այնպես լինի, որ օսմանցոց բռնակալների ձեռքը այս նահանգի վրա չհասնի»³։ Նրանք հայտնել են նաև, որ իրենց ռուսաց հպատակությունն ընդունելու մասին օսմանցիք տեղեկացել են և սկսել են ավելի թշնամաբար վերաբերվել. «Այս ժամանակներում — հայտնում են նրանք, — օսմանցիների մի խումբ այս բաների հոտն առնելով՝ հասկացել են, որ մենք՝ թշվառներս խնդիրք ենք գրել ի ծառայության ավագանյաց արքայապսակ թագավորին և օգնություն խնդրել: Օգնության մեր խնդրանքի համար իրենց թշնամությունը մեր թշվառներիս վրա ավելի է շատացել... իրենց մտադրությունն այն է, որ ձեր օգնությունն այստեղ չհասած, այս նահանգը իրենց հպատակության տակ առնեն...»⁴։ Գրության վերջում նրանք վստահություն են հայտնել, որ եթե «Ռուսաց օրհնյալ բանակից մի քիչ օգնություն որոշեն և ուղարկեն, աստվածային օգնությամբ, երբ անարգանքի փոշին օսմանցիների աչքին ցանկելով հաղթական էինք դուրս դալիս, նույն ձևով, ձեր օգնության շնորհիվ, օսմանցիներին պատասխան կտանք և նահանգը կպահպանենք»⁵։

Գանձակի բնակիչները, ինչպես երևում է էլշու մի զեկուցագրից, դիմել են նրան և խնդրել, որ նա գա Գանձակ և իրենց մոտ մնա, բայց նա մերժել է. «Եւ ինձ գրել ան և մարթ ան աղարկէլ — գրում է էլշին արքունիքին, — թէ եկ Դանջայ նստի: Եւ ես ասացի թէ՝ գիդիլ չեմ գալ»⁶։

Գանձակին թյուրքերից սպառնացող վտանգի կապակցությամբ էլշին խորհրդակցել է մելիքների և յուզբաշիների հետ՝ գանձակեցիներին օգնելու և հայ-աղբիւրքեցանական դաշինք կնքելու կապակցությամբ: Սղնախի յուզբաշիները և մելիքները խոստացել են էլշուն, որ եթե գանձակեցիներին որևէ վտանգ սպառնա, նրանք պատրաստ են գնալ նրանց օգնության: Մելիքներն ու յուզբաշիները իրենց համաձայնությունն են տվել՝ Գանձակի խաների և աղալարների հետ փոխօգնության պայմանագիր կնքել՝ վստահացնելով թագավորի

¹ ГАФКЭ, ф. Арм. д. № 4 за 1724 г., л. 26.

² Նույն վավերագիրը:

³ Հ. Ահառյան, Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությունների մասին, էջ 66:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ ГАФКЭ, ф. Арм. д. № 4 за 1724 г., л. 26.

էլշուն, որ աղբրեջանցիները, հայերը և վրացիները համատեղ ջանքերով կկարողանան դիմադրել թյուրքական բանակին մինչև ռուսաց օգնությունը կհասնի իրենց. «Հայոց ուղբաշէքն ասացին թէ... — գրում է էլշին իր վերև հիշված ղեկուցագրում, — վեր կառունք երեք-չորս հարիւր մարդով, գէ գնանք Գանջայ՝ տեղն խանին և երկրին քաղխոգէքոնց խետ ղովլ կոյ դնենք, որ մեք գէ գնանք Դանջոյ քամակ, քաղաքն կէ պախէնք, մինչի թագաւորին ղոշումն շատ կամ փոքր կանուխ գայ քաղաքն, զրայ թագաւորին անումն մեր վերէն լինի, մեք, վրացիքըն և ղզլբաշն, թագաւորին շաղավաթովն, գիտել անք օսմանլվին զարշոյ դնէլ և ջուղաբն տալ»¹։

էլշու նշված ղեկուցագրից մենք իմանում ենք նաև, որ Սղնախները եկած Գանձակի պատգամավորությունը ցանկացել է գնալ դեպի Բաքու իշխան Դուրդուրկովի մոտ, բայց ճանապարհը վտանգավոր լինելու պատճառով էլշին խորհուրդ չի տվել. Բաքու է ուղարկվել Գանձակի պատգամավորներից միայն մեկը, էլշու վարձած երկու ուղեկիցների հետ։ Այդ մասին էլշին գրում է. «Իսայ ըէկն ուզում էր գրէրն բերէր ղուլուղ. էս տեղիս ուղբաշէքոնց խետ մասլայաթ արարինք, որ յինքըն տեղս մնայ, շուն ճանապարհ ախ այ. եւ ես երկու մարթ բոնեցի՝ մէկ ուրենց մարդին խէտ, էն երկու գիրն և էս գիրն տվի, աղարկեցի ղուլուղ»²։

էլշին իր այդ ղեկուցագրի վերջում կրկին խնդրել է. «Վասն Աստուծոյ խաթիր համար, շատ և փոքր, քամակ խասցուր քանի օսմանլուն եկել չէ, թագաւորին ղոշունըն մեղ խասանի, և երկրին տէրութիւն առի»։

էլշու հաշտարար գործունեությունը, Անդրկովկասում ստեղծված քաղաքական նոր իրադրություն մեջ, անհամեմատ ավելի էր հեշտանում. թյուրքական աղբրեսիայի անմիջական վտանգն ավելի էր մոտեցրել Անդրկովկասի երեք ժողովուրդներին՝ հայերին, վրացիներին և աղբրեջանցիներին։ Բացի այդ, նրանց մոտեցնում էր նաև ռուսական հպատակություն ընդունելը. շատ ժամանակ չէր, որ ռուսական հպատակություն էին ընդունել հայկական Սղնախները, իսկ այժմ, երբ իրենց հպատակությունն էին հայտնում նաև դանձակեցիները, էլշուն մնում էր այդ երկու «նորընծա» ժողովուրդները կողք-կողքի բերել և Ռուսաստանի անունից առաջարկել նրանց համերաշխ գործունեություն՝ կազմակերպելով նրանց ուժերն ընդդեմ թյուրքական աղբրեսիայի։

Եվ էլշին անմիջապես անցնում է գործի և հայերի ու աղբրեջանցիների նախնական համաձայնությունն առնելուց հետո, առանց դժվարության, կնքել է տալիս հայ-աղբրեջանական փոխօգնության դաշնադրությունը։

Դաշնադրության կնքման կոնկրետ պրոցեսը կատարվել է հետևյալ ձևով։ Նախ կազմվել է դաշնագրի հայկական տեքստը, ապա հայերի կազմած դաշնադրության տեքստն ուղարկվել է Գանձակ և հանձնարարվել է Սղնախների ղուլբաշիների և մելիքների դաշնադրության այդ օրինակով կազմել իրենց դաշնագիրը և ուղարկել էլշուն։

Դաշնագրի հայկական տեքստը կազմվելուց հետո, էլշին առանձին մարդ է ուղարկել Գանձակ և այդ դաշնագիրն առանձին նամակով ուղարկել Մահմադ Ղուլի խանին։ Մեզ հասել է էլշու խանին ուղարկած նամակի հայերեն պատճենը։ Նամակում շնայած հասցեատիրոջ անունը բացակայում է, — երևի չի նշված, որպեսզի թշնամու ձեռքն ընկնելիս մեղադրանքի նյութ չդառնա, — սա-

¹ ГАФКЭ, ф. Арм. д. № 4 за 1724 г., л. 26.

² Նույն վավերագիրը։

կայն դատելով նամակի տեքստում արված մի ակնարկից՝ «շաղավաթլամա»-ն ուղարկելու մասին, անկասկած է, որ հասցեատերը Մահմադ Ղուլի խանը պիտի լինի, որովհետև նա էր, որ պատգամավորության հետ «շաղավաթլամա» էր ուղարկել էլշուն:

Էլշին իր այդ նամակում երկար կյանք է մաղթում խանին և հայտնում նրա նամակի ստացման մասին. «Ի Քրիստոսի ծառայ Բվան-Կարապետէս Բարև հազար բարիչ հասցէ վերոյ գրեալին ղուլուղումըն ի բարին, որ Տէր Աստուածըն հրամանոցըդ յերկար ումըր տայ և էվելի դովլաթ, ղայիմ սաղ լինէք, սալամաթ ջմլի դօստերով: Եւ այլ արգ լինի վերոյ գրեալին ղուլուղումըն, որ հրամանոցըդ շաղավաթլամէն ինձ խասաւ, շնորհակալ եմ հրամանցէդ»:

Այնուհետև, էլշին իր նամակում տեղեկացնում է, որ Գանձակից իր ստացած գրութիւնները Խա բեկի հետ միասին, ճիշտ է՝ որոշ ուշացումով, բայց արդեն ուղարկել է Բաքու. «Բաքոյոյ սարդարն մին ըխդիբարի մարթ էր աղարկել, որ գիր էր բերել, էլ էն մարգին խետ, Բսայ բէկն և հրամանոցը գրած շաղավաթլամէն և մազարն աղարկեցի Բաքոյ Սարդարին ղուլուղն»:

Էլշու նամակում ուշադրության արժանի է նրա հաղորդած տեղեկութիւնն այն մասին, որ ինքը նամակ է ստացել Բաքվից, որ Դազստան հիսուն հազար հոգուց բաղկացած ռուսական բանակ է եկել, որը շուտով գալու է Շամախի. «Եւ ինձ գրել ան, թէ ղոշումն ԾՌ (50.000) մարդ այ եկէլ Դաղըստան եւ մեր ղոշումն հազիր այն, գրում ան որ էս մօտերովս գէ գան Շամախոյ վերէն»:³

Էլշին հայտնում է նույնպես, որ ինքը Ղարաբաղի հայերից ստորադրութիւն է վերցրել և Ալահվերդիի հետ ուղարկել Գանձակ, որպեսզի դրա նման մի գիր էլ Գանձակի աղբիւրները կազմեն, ուղարկեն իրեն հայերին հանձնելու համար. «Եւ էս տեղէս Ղարաբաղոյ խայերէն գիր ամ յինք առէլ եւ գիրին սավաղըն տվի իմ ըխտիբարի մարգին, որ անումըն Ալայվերդի այ, բերի ղուլուղ: Եւ էտուր գօրայ էլ շաղավաթ առեն, Գանջոյ եղեալ մեծօվ եւ փոքրօվ էլ մին գիր գրեն, աղարկեն, որ էս խայերն էլ խաթիրջամ լինեն»:

Նամակի վերջում էլշին հայտնում է, որ սարդարից (այսինքն՝ թագավորից — Ա. Ա.) իր սաացած գրութիւնը կարդացել է Քայե Խոստորովի մոտ, որը և իրազեկ կդարձնի իրեն. «Եւ սարդարին գրած գիրն Քայե Խոստորովին քշղին կարդացի, ամենայն աֆալն ասացի, որ հրամանոցը արգ առի»:⁴ Միաժամանակ էլշին խնդրում է իրեն տեղեկութիւններ գրել Վրաստանի և թյուրքերի մասին, որպեսզի ինքը կարողանա հաղորդել Բաքու, իշխան Դուրդուրովին. «Վրաստանայ և օսմանլվին աֆալն գրես, որ ես Բաքոյ սարդարին գրեմ թէ՛ էսպէս խաբար այ»:⁵

Հայ-աղբիւրջանական այդ դաշնադրութիւնը, որն իր սուր ծայրով ուղղված էր Թյուրքիայի դեմ, կազմվել է երկու օրինակից — հայ մելիքներին և յուզբաշիններինը Սղնախներում՝ հայերեն լեզվով, իսկ աղբիւրջանականը՝ գրվել է Գանձակում՝ պարսկերեն: Մեզ են հասել, բարեբախտաբար, այդ պայմանագրերի երկու բնագրերի տեքստերն էլ, և մենք այժմ ի վիճակի ենք կոնկրետ խոսել նրանց բովանդակության մասին:

³ ГАФКЭ, ф. Арм. дела № 2 за 1739 г., л. 43.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

Հայկական Մղնախներում այս դաշնագրությունը կազմվել է մարտ ամսի 21-ին: Դաշնագրության տակ ստորագրել են Սղնախներում քաղաքական կշիռ ունեցող գրեթե բոլոր ճանաչված անձինք՝ Գանձասարի հսայի կաթողիկոսը, նրից Մանկանց ներսես կաթողիկոսը, Ավան, Միրզա, Թարխան, Բաղի, Սարգիս, Աբրահամ յուզրաշիները, մելիքներից՝ Թամրազը, Բաղիրը, Գրիգորը, Ծկանը և Դանիելը:

Պայմանագրում հայկական Սղնախների այս ղեկավարները պայմանավորվել են, որ եթե գանձակեցիների վրա հարձակվելու լինեն թյուրքերը կամ լեզգիները, իրենք պարտավոր են զնալ նրանց օգնության, որովհետև նրանք ևս ուսաց թագավորի հպատակներ են, իսկ եթե հակառակը պատահելու լինի՝ թյուրքերը կամ լեզգիները հարձակվելու լինեն հայերի վրա, այդ դեպքում Գանձակի աղբյուրներից պարտավոր են օգնության հասնել հայերին: Անհրաժեշտ ենք համարում հայկական Սղնախների պայմանագիրը բերել ամբողջությամբ:

«Պատճառ գրոյս այս է, որ թիվն Փրկչին 1724 մարտի ամսին ԻԱ-ումն (21) մեք Ղարաբաղի երկրի հայոց ազգոս, կարապետով, մեծով և փոքրով, ուզբաշով, մելիքով, քէխով և քաղխողէքով, մեզ վաքիլ և ախտիար արարին(ք) էլչի Իվան-Կարապետին, որ մեր մէջն և գանջեցուց մէջն մինըզմինոյ խետ դոշմանութուն ունինք, շուն էլչի բէկին արզ արարինք: էլչի բէկն գիր էր գրել Գանջու մեծի և փոքրին վերէն և Գանջոյ եղեալ մեծ և փոքր գիր ին գրել էլչի բէկին՝ թէ մեք էլ քաղաւորին ծառայ անն և քաբէ անն (ընդգծումը մերն է— Ա. Ա.): էտ ջահտան, ես Եսայի կաթողիկոսըս, և ես Ներսէս կաթողիկոսըս, և ես Ավան ուզբաշիս, և ես Միրզա ուզբաշիս, և ես Թարխան ուզբաշիս, և ես Բաղի ուզբաշիս, և ես Սարգիս ուզբաշիս, և ես Աբրահամ ուզբաշիս, և ես մէլիք Թամրազըս, և ես մէլիք Բաղէրըս, և ես մէլիք Գրիգորըս, և ես մէլիք Դանիւս, և ես մէլիք Ծկանս, մեր թաբուն թալեղովս, քէվխով և քաղխուղով, մեծով և փոքրով, էս զիրս տվինք էլչի բէկ Իվան-Կարապետին էս ջահտան, որ էլչի բէկն մեզ գանջեցոնց խետ բարըշացանի, որ մինըզմինոյ խետ սէր մօհթաթ առենք և ինըզմինոյ քօմակ առենք: Եւ էս ըլթղամս էլ տվինք էլչի բէկին, որ քէ գանջէցոնց վերէն, քէ օսմանլուի և քէ լակղոյ զօշում զայ, մեր հայոց ազգիս քամամի վերոյգրեալս զնանն գանջէցոնց օմակ, շուն Գանջոյ էլ մեր քաղաւորին քարէ ալ (այսինքն՝ Պետրոս Մեծին հպատակ է— Ա. Ա.): Եւ քէ մեզ վերէն օսմանլու կամ լազլի զայ, գանջեցիմ գան մեզ օմակ (ընդգծումը մերն է— Ա. Ա.): Եւ թէ մեր հայոց ազգս գանջեցոնց խաբենք, գնանք ոչ քօմակ և թէ գանջեցոնց խաբենք, կամ գանջեցոնց մին մարգի կամ շատ փոքր բոնենք, կամ սպանենք, կամ թալանենք, մեր զլուխն և մեր ապրանքըն թաղաւորին լինի:»¹

Այս պայմանագրության մեջ ուշադրության արժանի է առանձնապես այն, որ Գանձակի աղբյուրներից նախապես նամակ են գրել էլչուն և հայտնել, որ իրենք ուսաց հպատակներ են՝ «թագաւորին թաբէ անք», և երկրորդ, որ Ղարաբաղի հայերը և Գանձակի աղբյուրներից փոխադարձ կոնկրետ պարտավորություն են վերցրել ձեռք-ձեռքի տված պայքարել թյուրքերի դեմ:

Դաշնագրի հայկական տեքստից բիշ է տարբերվում գանձակեցիների կազմած պարսկերեն տեքստը: Անհրաժեշտ ենք համարում այն ևս բերել առանց կրճատման, տալով նախ պարսկերեն բնագիրը, ապա՝ թարգմանությունը:

¹ ГАФКЭ, ф. Арм. д. № 2 за 1739 г., л. 43.

پادشاه. میسور پناه خلد الله مکه

ولسمب عالمات

چون قبل از غیبت طایفه میسور سقا و سایر میسوری کتبی
 قتلایغ متعرف و مژم شده التزام بقصد مضبوط شمع این بوکالت
 اراد را پدید طالع زنده ایسی که از درگاه فرستاده بخته رفع
 که در روز مخصوص ما این امانت و ایاب کنج و جماعه سقا
 بعدین طایفه سقا آمده بود نوشته بودند هرگاه هر بعد الیوم
 عبارت از اول ماه وارت مطابق ۱۳۶۰ بکر
 میوی صاف باشد طریقه طبیان عیان و کثرت
 و سبب گرفته و با امانت و لایاب بلند کنج و سایر شیعین
 اظهار عداوت و خصومت نمایند و یا اگر هر وقت در لوزره
 یا غلبه باغیه گریه در رویه بر سر کنج سپاه آید و ایشان
 در عالم شهر و قرب جوارر کتا هر منفه مبدل و عموم
 کنج نیاید و صحوه معاف دارند در هر صورت مجرم و
 که کار در واجب بستنید هر دو طایفه فغان ایشان مختص کفار طاعت

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԻ ԹԱՐԻՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ¹

Թագաւոր ապաւէն Բրիտոնէից, մշտնջենատուրեսցէ, Աստուած զրազաւորութիւն նորա, բարեւար աշխարհայնոց:

Որովհետեւ սրանից առաջ Սղնախի քրիստոնյաների մի խումբ և Ղարաբաղ երկրի մյուս քրիստոնյաները խոստովանեցան և հանձնառու եղան ստանձնելու այս հետեւյալ ձեռք և արձանագործեցաւ, փոխանորդութեամբ Ավանի և Կարապետի, տեղեկութեամբ աղնվազույնին քրիստոնէից Իլբեղի (Լիլի բեղի), որ Բարձր Դռնից՝ վերացնելու համար թշնամութիւնն ու հակառակութիւնը՝ որ կար Գանձակի ժողովրդեան ու արբարների և Սղնախի հասարակութեան միջև, Սղնախի ժողովրդի մեջ դալով, գրեցին, որ ընդմիշտ սկսած այս օրվանից, այն է մարտ ամսի կեսերից, որ է հիշրիթի 1136 թվին մարգարեական (շնորհ և խաղաղութիւն Աստուծոյ ի վերայ նորա լիցի), եթե ապստամբութեան և անհնազանդութեան ճանապարհը բռնելով, Գանձակ քաղաքի ժողովրդի և արբարների և ուրիշ շիանների հետ թշնամութիւն և հակառակութիւն ցույց տան, և կամ այն որ ամեն ժամանակ՝ երբ լեզգի ապստամբ ավազակների և ումիսների (օսմանցիների) խմբից Գանձակի վրա զորք դա և իրենք հանդիստ նստած դրացնութեան մեջ առաջին առնելով՝ Գանձակի մարդոց օգնութեան չդան և իրենք իրենց անպարտ համարեն, համենայն դեպս հանցագործ և մեղավոր և պատժապարտ պիտի լինեն, նրանց ապրանքը, կյանքը և տունը-տեղը պետութեան ավազանյաց սեփականութիւն պիտի դառնա, հարցաքննութեան և պատժի պիտի ենթարկվին: Էտեաբար, այժմ դաջարների բոլոր ավազները, այւորները, դիտունները և աշակերտները, և քաղաքի հաջիները, տանուտերները, հայտնապես խոստովանելով և ճշմարտապես ընդունելով՝ յանձնառու եղան, որ այսուհետեւ ընդմիշտ այլևս ձեռք են վերցնում հարձակումներից և թալանից և կովից: Ղաջարների և քաղաքի ցեղերից որեւէ մեկը, այնքան ժամանակ, որ Սղնախի հասարակութիւնը և Ղարաբաղ երկրի մյուս քրիստոնյա ժողովուրդը հնազանդութեան և հպատակութեան շրջանակի մեջ մնալով, հյուս և հնազանդ մնան (եղած լինին), և կամ այն՝ որ նրանց հպատակութեան և հնազանդութեան ժամանակ օսմանյութի և լեզգիների կողմից նրանց վրա զորք դա, դաջար և քաղաքացի մարդիկ սուսաջին առնելով՝ հիշյալ քրիստոնյա ժողովրդին օգնութեան և ձեռնտվութեան չդան, համենայն դեպս հանցագործ և մեղավոր և պատժապարտ պիտի լինեն, և չարագործ և ոչ դատի և անբարեպաշտ պիտի համարուին մահմեդականութեան օջաղի առաջ: Գրվեցավ ուշէր ամսի 12-ին, 1136 թ.:

Գանձակեցիների պայմանագիրը ստորագրված է և կնքված Գանձակի աշարի ընկնող մարդկանց մեծ ու փոքր կնիքներով:

Գանձակից վերեւ հիշված ղաջնագրերը, ինչպես և մի շարք այլ վավերագրեր, էլշուն բերել է իր ներկայացուցիչը՝ Խաչատուրը: Այդ երեսում է էլշու ապրիլի 9-ին արքունիք ուղարկած ղեկուցադրի հետեւյալ տեղեկութիւնից. «Եւ Խաչատուրին աղարկել ի Գանձայ և Գանջոյ երկու մաղար, որ մինն աղալարին և մինն քաղխոդեքոնցին, և մինն էլ ըթգամին շոռին, մինն էլ Մայմաղ Ղուլի խանի աղղին էր և մինն էլ Քալբալաի բեկին արղին էր բերել»¹ Եւ էլշին այս ողջ գրադրութիւնը՝ ղաջնագրերը և նրանց հետ կապված մյուս նամակագրութիւններն ուղարկել է արքունիք:

¹ ГАФКЭ, ф. Арм. д. № 4 за 1724 г., л. 5.

Հայ-աղրբեջանական վերև բերված պայմանագրերը, իրենց տեսակով, վերին աստիճանի կարևոր վավերագրեր են հայ և աղրբեջանցի ժողովուրդների բարեկամական հարաբերությունների պատմության մեջ: Նրանք մեզ նոր ապացույց են տալիս հայ և աղրբեջանցի ժողովուրդների անխզելի եղբայրության և նրանց համատեղ պայքարի մասին՝ թյուրքական ագրեսիայի դեմ:

* * *

Հայ-աղրբեջանական նշված պայմանագիրը, ինչպես պարզվում է, նշանակությունից զուրկ և գործնականում անհետևանք մնացած ինչ-որ դիվանագիտական անիմաստ վավերագիր չի հանդիսացել: 1725—1729 թվերին Անդրկովկաս խուժած թյուրքական բանակի դեմ հայ-աղրբեջանական քաջարի հայ-րենասերները ձեռք-ձեռքի տված կռվել են թյուրքական կալմակերպված բանակների դեմ և անօրինակ սխրագործություններ կատարել:

Մեր ներկա հոդվածի նպատակից դուրս է կանգ առնել հայ և աղրբեջանցի ժողովուրդների կողմից թյուրքական ագրեսիայի դեմ մղված հետագա տարիների պայքարի վրա: Սակայն ցույց տալու համար՝ թե ինչպիսի՝ խիզախությանը են նրանք մարտնչել թյուրքական ագրեսորների դեմ, անհրաժեշտ ենք համարում բերել միայն մի փոքրիկ հատված բրիգադիր Վ. Յե. Լևաշովի 1726 թվի օգոստոսին Ալեքսանդր Իվանովիչ Աստերմանին ուղարկած զեկուցումից: Չեկուցումը գրված է ծածկագիր և մեծ դժվարությամբ մեղ հաջողվեց վերծանել, որովհետև ձեռքի տակ չունեինք այդ ծածկագրի բանալին:

Բերում ենք այդ հատվածը.

ДОРЖЕ Д нечужбѣхъ брѣзяхъ мешзтм-
жрядмъ мя ярѣамъ 7шз878, тѣ [б]еднерѣ-
жрядмо ѡядя78 арѣ27978: ярѣаме дор-
жяѣ дѣдрѣдѣнта#дса. 8 мя бозятсѣмѣ-
шзтмжрядмъ 79 доржѣ 7шз878 8 шптязедѣ
8ѣрме ѣш278. 8 899 шмс79, бозятсѣмѣѣ-
тѣ 6847ш жѣ ѡрѣѣамѣѣ 7е дрѣѣѣ878ΔУ.
ѡдѣ доржѣѣ 8 дѣѣѣѣ 7е рѣдѣрѣмѣѣѣ-
8е ѣдрѣадѣмѣ ѡс79 8ѣѣѣѣ.

ՏԱՐԿԱԿՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

„Турки с великими трудами неоднократно на армянъ ходили, но [ч]етверо-кратно батали[и] проиграли: армяне туркамъ сопротивляютца. И на муганцовъ неоднократно жѣ турки ходили и овладеть имъ не могли. И изъ оныхъ, муганцовъ немалое число къ Ормянамъ же преобщились, что туркамъ и самымъ же разграничение заприятны быть имсѣтъ“.

«Թյուրքերը մեծ ուժով բազմաթիվ անգամներ հայերի վրա են զնացել, բայց ամեն անգամ մարտերի մեջ պարտվել են: Հայերը թյուրքերին դիմադրում են: Թյուրքերը մուղանցիների (ադրբեջանցիների) վրա ևս բազմաթիվ անգամ զնացել են և չեն կարողացել նրանց տիրել: Եվ նրանցից՝ մուղանցիներից, հայերին են միացել»:²

Լեաշովի այս զեկուցագրից երևում է, որ Մուղանի ադրբեջանցիները հայերին ռզնել են:

Ճակատագրական նշանակություն ունեցող այդ օրերին ադրբեջանցիները զինական ակտիվ օգնություն են ցույց տվել հայերին և ձեռք-ձեռքի տված կռվել են թյուրքական ագրեսորների դեմ:

Սահսկանցիների՝ թյուրքական զորքերի դեմ մղած հերոսական պատերազմների մասին վկայում է նաև Համմերը, որը ավելորդ ենք համարում մեջ բերել:

А. Абрамян

Договоры 1724 года о взаимопомощи между армянами и азербайджанцами

Р е з ю м е

Дружба трех братских народов Закавказья — азербайджанцев, грузин и армян — имеет вековую историю: они совместно переносили испытания истории, совместно боролись против иностранных захватчиков и совместно создавали культурные ценности.

В истории дружбы закавказских народов важнейшим событием является до сих пор еще не исследованные и не ставшие достоянием науки договоры о взаимопомощи армян и азербайджанцев против турецкой агрессии, заключенные в марте 1724 года.

Указанные договоры взаимопомощи были составлены в 2-х экземплярах: азербайджанцы Ганджи (Кировабада) составили его на персидском языке, а армяне Карабаха — на армянском. Фото-снимок персидского текста вместе с другими персидскими документами, связанными с этим договором, был передан историком А. Г. Оганесяном академику Г. Ачаряну, который и опубликовал его в 1927 году в переводе на армянский язык.

Однако академик Г. Ачарян не был знаком с историей этих документов и думая, что они связаны с армя-

но-персидскими взаимоотношениями, опубликовал их без комментариев под общим заглавием: «Материалы по истории армяно-персидских отношений». Армянский текст пока не опубликован. Указанные документы обнаружены нами и моим товарищем доцентом Д. Габриеляном в 1936 году в Московском государственном архиве феодально-крепостнической эпохи.

В конце 1723 года в Карабах прибыл представитель Петра Великого армянин Иван-Карапет, с заданием содействовать распространению протектората России над армянами и азербайджанцами и организовать их военные силы против турецкой агрессии. Представитель Петра развернул большую работу в Закавказье и добился положительных результатов: местные жители всюду с удовольствием принимали подданство России. В архивах обнаружено несколько документов с сотнями подписей и печатями азербайджанских и армянских политических представителей, где они заявляют, что принимают подданство России и будут ее верными гражданами.

Обнаруженные новые документы

² ГАФКЭ, ф. Арм. д. № 2 за 1739 г., л. 2.

вполне подтверждают мнение товарища Багирова о том, что: «...Передовые люди грузинского, армянского, азербайджанского народов и народов Дагестана в своей борьбе против турецких и персидских захватчиков всегда обращали свои взоры к России и искали у нее помощи и поддержки» («Большевик», № 13, 1950 г., стр. 35).

Из вновь обнаруженных документов видно также, что представитель Петра Иван-Карапет проделал большую работу по устранению межфеодалных конфликтов в Закавказье, которые значительно ослабляли местные народы и открывали широкие двери перед чужеземными захватчиками и в первую очередь перед турецкими агрессорами.

При активном вмешательстве представителя Петра Великого Ивана-Карапета в марте 1724 года были заключе-

ны договоры взаимопомощи между азербайджанцами Ганджи и армянами Карабаха.

В договорах сказано, что если османцы или лезгины нападут на армян Карабаха, то азербайджанцы должны помочь армянам, а если османцы и лезгины нападут на азербайджанцев, то армяне должны помочь азербайджанцам, «так как оба народа являются подданными России».

Из расшифрованного нами тайнописного доклада генерала Левашова, адресованного царскому двору, видно, что вышеназванные договоры взаимопомощи не остались голословным заявлением: в героической борьбе армян и азербайджанцев против турецких агрессоров в 1725—1729 гг. армяне и азербайджанцы действительно помогали друг другу и совместно сражались против турецких захватчиков.